

ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԷԼԵԱՆԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ ՍԻՍԱԿԱՆ» ԵՐԿԻ ՍՐԲԱԽՕՍԱԿԱՆ ՄԱՍԵՐԸ

Միջնադարի մեր մատենագրութեան նշանաւոր դէմքերից մէկի՝ Ստեփանոս Օրբէլեանի (ԺԳ. դ. կէսեր - 1303 թ.) «Պատմութիւն տանն Սիսական» երկը, որպէս պատմագրական տիպական գործ, բացի պատմագիտական կարեւոր արժէքից, ունի նաեւ գեղարուեստական մեծ արժանիքներ¹, որոնցից մէկը նրա մէջ գրական համեմատաբար փոքրածաւալ բազմազան տեսակների (ժանրերի)՝ վարք, վկայաբանութիւն, զրոյց, տեսիլ, չափածոյ եւ արձակ թղթեր եւ այլն) առկայութիւնն է: Ստ. Օրբէլեանը կրողն ու շարունակողն է Ե-ԺԲ. դարերի մատենագրական աւանդոյթների, որոնք թէեւ ժամանակի ընթացքում մասնակի փոփոխութիւններ են կրել, սակայն չեն ազդել գրատեսակային օրինաչափութիւնների վրայ: Իր Պատմութիւնը գրելիս՝ որպէս օրինակելի նմոյշ նա ի մտի է ունեցել հէնց Ե. եւ նրան յաջորդող դարերի պատմագրական կոթողները:

Միջնադարեան գրականութեան, առաւել եւս պատմական ծաւալուն արձակի ներտեսակային պատկերը դժուար է միանշանակօրէն որոշել. միջտեսակային բազմազան ազդեցութիւնների եւ ներթափանցումների հետեւանքով որեւէ ստեղծագործութիւն այս կամ այն տեսակի սահմաններում գետնից չէ առարկայական չէ կամ անհնար է:

Սրբախօսական երկերի (վարք, վկայաբանութիւն, ներբողեան, սրանցից ածանցուած կամ սրանց տարրեր ունեցող տարրեր գործեր) ուսումնասիրութիւնը, սովորաբար, արւում է տարրեր դիտանկիւններով՝ պատմական, աստուածաբանական, ընկերային-մշակութարանական, պատմաքաղաքական եւ բանասիրական:

¹ Պատմագրական երկերի պատմականութեան, գիտականութեան եւ գեղարուեստականութեան միասնականութեան մասին մանրամասն տե՛ս Մ. ԱՐԵՂԵԱՆ, Երկեր, Հ. Գ., Երեւան, 1968, էջ 170, 314-315 եւ այլն, Հայ միջնադարեան գրականութեան ժանրեր, Երեւան, 1984, էջ 7-37:

Այսուհանդերձ, այս բոլորի հիմքը բանասիրական-գրականագիտական հետազոտությունն է: Սրբախոսական հիմնական տեսակներն են վարքը եւ վկայարանությունը², որոնց նպատակն է պատմական անձի (կամ անձանց)՝ յանուն հաւատի կատարած սխրանքը ցուցադրել որպէս կրթիչ օրինակ ընդհանրապէս բոլոր հաւատացեալների համար³: Վարքերն ու վկայարանություններն ունեն յստակ, սքեմատիկ կանոններ. նախ, պէտք է լինի իդէալականացուած հերոս, ապա՝ պատմական կարեւոր մի փաստ, իրողություն, որի շուրջ պէտք է հիւսուի սրբախոսական շարադրանքը: Այս գրառեսակը ժամանակի ընթացքում որոշ փոփոխությունների է ենթարկուել (եւ սա յատուկ է բոլոր, այդ թւում՝ եւ ո՛չ քրիստոնեայ ժողովուրդներին)⁴: Տեսակի այս երկու դրսեւորումները՝ վարքն ու վկայարանությունը, տարբերակիչ գծեր ունեն⁵: Առաջինը հերոսի վախճանն է. վարքում հերոսը չի գոհ-

² Մանրաման տե՛ս ԱԻԴԱԼԻԳԵԱՆ Մ., Հայ գեղարուեստական արձակի ձեւաւորումը (Ե. դար), Երեւան, 1971, էջ 53-158, ՏԵՐԴԱԽԹԵԱՆ Ք., ԺԱԺԻ. դարերի հայ վարձագրութիւնը, Երեւան, 1980, նոյնի՝ Վարձ եւ վկայարանութիւն. Հայ միջնադարեան գրականութեան ժանրեր, Երեւան, 1984, էջ 38-92: Ամենեւին չձանրանալով ժանրային խրաջատկութիւններին ու ընտրուելիքների վրայ՝ հարցին կ'անդադառնանք միայն ընդհանուր սկզբունքներով:

³ Սրբախոսական ընդթի զործերի արմատները գալիս են հեթանոսական առուածների մասին առասպելական գովասանական պատումներից. որպէս գրառեսակ ձեւաւորուել է քրիստոնէութեան տարածումից սկսած: Սովորաբար եւ վարքերը, եւ վկայարանութիւնները գրուել են սրբերի մահից յետոյ, սակայն կան նաեւ բացառութիւններ, ինչպէս Մաշտոց Եղիարդեցու վարքը՝ գրուած 893 թ., նա աշակերտ Ստեփանոս կրօնաւորի կողմից. տե՛ս ՅՈՎԱԼԲԵՆԱՅ Գ., Յիշատակարանք ձեռագրաց, Կ. Ա. (Ե. դարից մինչեւ 1250), Անթիլիաս, 1951, սիւն 88-9: Յայտնի է, որ վկայարանութիւնների ձեւաւորման նախնական շրջանում հեղինակներն օգտուել են դատական այն արձանագրութիւններից, որոնք կատարուել են քրիստոնեաներին քննելիս: Գրի էին առնում նաեւ նահատակների անունները եւ նրանց գործունէութիւնը՝ անհետնալով դրա համար սահմանուած մահապատիժը Այդ պատճառով էլ երկերը գրեթէ միանման էին ստացուում: Տե՛ս http://www.krugosvet.ru/enc/kultura_i_obrazovanie/literatura/AGIOGRAFIYA.html, http://dic.academic.ru/dic.nsf/enc_colier/5420.%D0%90%D0%93%D0%98%D0%9E%D0%93%D0%A0%D0%90%D0%A4%D0%98%D0%AF, <http://www.diclib.com/cgi-bin/d1.cgi?l=ru&base=colier&page=showid&id=276>, <http://www.cultinfo.ru/fulltext/1/001/008/040/630.htm>:

⁴ Рифтин Б. Л., Типология и взаимосвязи средневековых литератур (вместо введения). – в кн. «Типология и взаимосвязи средневековых литератур Востока и Запада», Москва, 1974, с. 14.

⁵ Տե՛ս ԱԻԴԱԼԻԳԵԱՆ Մ., Հայ գեղարուեստական արձակի ձեւաւորումը (Ե. դար), էջ 75-76:

ւում⁶ ի տարբերութիւն վկայաբանութեան, որը մահուան հանդէպ Քրիստոսի տարած յաղթանակը կրկնելով՝ սեփական մահով վկայում է հաւատարմութիւնն Աստծուն (այստեղից էլ այս ենթատեսակի անունը): Երկրորդը կողմերի միջեւ բախումն է. վարքի մէջ պայքարը ներքին է, վկայաբանութեան դէպքում՝ այն հակաքրիստոնեայի (այլադաւանի, անհաւատի) դէմ է: Թաշնորդ տարբերութիւնը պատմամային է, եթէ վարքը պատկերում է հերոսի կեանքի ուղին, ապա վկայաբանութիւնը՝ միայն նահատակութեան, մարտիրոսութեան պահ: Կարեւոր տեղ ունի հերոսների տանջանքների, խոշտանգումների պատկերումը. եթէ վկաների տառապանքները մարմնական են եւ նախորդում են մահուանը, ապա վարքերի հերոսների համար դրանք պարտադիր չեն:

Հայ իրականութեան մէջ շատ տարածուած են եղել այս գրատեսակի գործերը, որոնք ժամանակի ընթացքում ժողովրդականացման հետեւանքով հանդէս են եկել պատմամային տարրեր ճիւղաւորումներով: Վարքագրական առաջին ինքնուրոյն գործը, որ պատմական անուրանալի արժէք ունի, Կորիւնի «Վարք Մաշտոցի» երկն է⁶: Բացի ինքնուրոյնաբար հանդէս եկող սրբախօսական երկերից, զգալի թիւ ունեն պատմագրական երկերում գետեղուածները, ինչպէս Ազաթանգեղոսի Պատմութեան մէջ⁷ Գրիգոր Լուսաւորչի վարքը, Հռիփսիմեան կոյսերի վկայաբանութիւնը⁸, Կիրակոս Գանձակեցու երկում⁸ Յովհաննէս Սարկաւազի մասին հատուածը⁸ եւ այլն:

Ստ. Օրբէլեանը եւս իր «Պատմութիւն տանն Սիսական»ի մէջ ներառել է սրբախօսական տեսակի գործեր, որոնցից մի քանիսին անդրադառնում ենք ստորեւ:

Առաջինը Ազգ սեպուհի նահատակութեան պատկերումն է, որը յաջորդում է Սիւնեաց «անարի եւ վատ» իշխան Վասակի, նաեւ՝ Գրիգորի մասին պատմող գլխին: Սիւնեաց պատմիչի սկզբնաղբիւրը եղել է Ղազար Փարպեցու Պատմութեան համա-

⁶ ԿՈՐԻՒՆ, Վարք Մեսրոպայ վարդապետի. Մատենագիրք Հայոց, Կ. Ա., Ե. դար, Անթիլիաս-Լիրանան, 2003, էջ 225-272:

⁷ Ա.Գ.ԱԹԱՆԳԵՂՈՍ, Պատմութիւն Հայոց. Մատենագիրք Հայոց, Կ. Բ., Ե. դար, Անթիլիաս-Լիրանան, 2003, էջ 1289-1735:

⁸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆԶԱԿԵՑԻ, Պատմութիւն Հայոց, Աշխատասիրութեամբ Կ. Ա. ՄԷԼԻՔ-Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 113-117:

պատասխան հատուածը⁹։ Հեղինակը, որ Վասակ Սիւնու արարքների համար «կորագլուխ» ու ամօթով է մնում, այս պատմութիւնն անում է ուրախութեամբ ու հպարտութեամբ։ 482 թ. Ճարմանի (ըստ Փարպեցու՝ «Ճարամանայնու»)՝¹⁰ զաշտում¹¹ պարսիկները ճակատամարտում են վրաց-հայկական միացեալ զօրքի դէմ։ Երկու պատմիչներն էլ մարտը տանուլ տալու համար իրաւացիօրէն մեղադրում են վրացիներին։ Պարսից Միհրան զօրավարը գերում է՝ Շիրակի տէր Ներսէսի եղբայր Հրահատ Կամսարական եւ Սիւնեաց տէր «աւօրէն ու կայեւնատիպ»¹² Գրիհնի եղբայր Ազգ սեպուհներին ու վրաց իշխաններին։ Հայոց Վահան Մամիկոնեան սպարապետին հետապնդելիս նրանց շրջեցնում է իր հետ՝ եւ «օր ըստ օրէ գառաջեաւ ածեալ կապանօք՝ դառն տանջանօք նախատէր եւ չարչարէր եւ հնարէր դարձուցանել յիւր կրօնս» (էջ 47)։ Ահա այստեղ է բախումը, որը պէտք է հանգուցալուծուի Ազգի մահով։ Հրահատը «աւներելոյք օգնութեամբ» ազատում է, սրա պատճառով Միհրանն աւելի է չարանում եւ գայրոյթը թափում է միւսի՝ Ազգի վրայ։ Հրահատի հրաշալի ազատման պատմութիւնը, ինչպէս եւ դրան նախորդող եւ յաջորդող դէպքերը, Փարպեցին մանրամասն ներկայացնում է, ինչպէս Օրբէլեանն է գրում՝ «լիով պատմեն մեզ եղիշէ եւ Ղազար Փարպեցի» (էջ 44)։ Այստեղ ուշագրաւ են սեպուհների եղբայրների կերպարները։ Ներսէս Կամսարականն ամէն ինչ անում է եղբորն ազատելու համար. հետեւում է պարսիկներին եւ այդ ընթացքում Գրիգոր Լուսաւորչի կառուցած մատուռում աղօթում՝ յիշելով, որ սրբերը տրտմակցում են վշտացեալներին, իսկ Լուսաւորիչը «լուեալ վաղվադակի ասաց ցՔրիստոս. եւ Փրկչին Աստուծոյ անդ եւ անդ հանեալ զկապեալն Հրահատ ի շրջափակ զգուշութենէ պահապանացն, արձակէր խաղաղու-

⁹ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՅԻ, Պատմութիւն Հայոց. - Մատենագիրք Հայոց, հ. Բ., էջ 2333-2335:

¹⁰ Նոյն տեղում, էջ 2328:

¹¹ Ճարմանայի զաշտը Մեծ Հայքի Ուտիք աշխարհի հիւսիսարեւմտեան սահմանի մօտ է՝ Կուրի աջ կողմում. տե՛ս ՅԱ.ԿՈՐԵԱՆ Թ. Խ., ՄԵԼԻՔ-ԲԱՍՇԵԱՆ ՍՏ. Տ., ԲԱՐՍԵՂԵԱՆ Յ. Խ., Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների քառարան, հ. 3, էջ 605:

¹² Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական, ի լոյս բնծարեաց Մկրտիչ էմին, Մոսկուա, 1861, էջ 47. այսուհետեւ այս հրատարակութեան փակագծեալ էջահամարը նշելու ենք չարադրանքի մէջ:

թեամբ առ սիրելի եղբայրն իւր եւ յաշխարհ»¹³: Մինչդեռ Ազգին իր եղբայրը, ընդհակառակը, յորդորում է ուրանալ քրիստոնէութիւնը եւ գրադաշտութիւն ընդունել, ինչպէս առաջարկում ու համոզում էր Միհրանը: Սիւնեաց պատմիչն այս պահը դիւանագիտորէն շրջանցել է՝ չցանկանալով կրկին կորագլուխ ու ամօթահար լինել նրա համար: Ազգ սեպուհը գերադասում է մահ ընդունել, քան դառնալ թշնամու կրօնին, աւելին՝ նա խիստ անտարբեր է իրեն ուղղուած բոլոր առաջարկների նկատմամբ եւ ազդեցիկ մի ճառ է ասում. «...ուրախ եմ եւ խնդամ մեռանել վասն Քրիստոսի, քան թէ գիագարս ամաց կեալ մեծամեծ փառօք յուրացութեան, եւ անվախեան պատուեասին լինել ժառանգորդ» (էջ 47-48):

Վկայարանութեան կարեւոր բաղկացուցիչներից է մարտիրոսի՝ մահուանից առաջ ասուած խօսքը, որը թէեւ ուղղուած է հակառակորդ կողմին, բայց եւ միաժամանակ ուսուցողական ու դաստիարակիչ է քրիստոնեաների համար: Վերջին խօսքը, այս նպատակից գատ, նաեւ գեղարուեստականութիւն ապահովող նըշանակութիւն ունի: Հերոսի կերպարը լիարժէք ներկայացնելու համար հեղինակներն աշխատում են այս խօսքը կազմել հնարաւոր չափով գեղեցիկ եւ ազդեցիկ: Նրա մէջ յաճախ գործածւում են պատկերաւորման գանազան միջոցներ, հռետորական արուեստին յատուկ արտայայտչանշանակներ: Խօսքից անցում է արւում գործին, այսինքն՝ հերոսն ուրախութեամբ ընդունում է մահը, քանզի դրանով լիովին ապացուցում է իր հաւատի անսասնութիւնը: Մահուան կամ տանջամահութեան տեսարանները, սովորաբար, նկարագրւում են մանրամասնօրէն:

Ընդհանրապէս վկայարանութիւններն ունենում են նախաբան, հիմնական պատում եւ վերջաբան, որոնք, ըստ հեղինակի նախասիրութեան, կարող են տարբեր ծաւալներ ունենալ: Նախաբանում, սովորաբար, նշուած են հերոսի մասին որոշ տուեալներ, ապա՝ պատմական այն պահը, որը նախորդում է մարտիրոսութեան բուն հատուածին: Վերջաբանները հիմնականում միանման են լինում. եթէ յաջողւում է թաղել նահատակին կամ ձեռք բերել նրա մասունքները, ապա գերեզմանը կամ նշխարները երկար ժամանակ հրաշքներ են գործում, բժշկութիւններ կատարում: Ազգպէս է նաեւ Ազգի պարագայում. նրա կտրուած գլուխը թաղում են Լուսաւորջի կառուցած այն նոյն մատուռում, ուր, ինչպէս

¹³ ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ, Պատմութիւն Հայոց, էջ 2334:

հայ քահանաների մարմիններից արձակուած լոյսը նոյն ազդեցութիւնն է թողնում մոգպետի վրայ, ինչ Մարանդի դէտքի. նա թուլացած ու կիսամեռ հազիւ կարողանում է լքել բանտի երդիկը: Սրանից յետոյ մոգպետը նախ դահճապետի միջոցով, ապա անձամբ խօսում է սուրբ քահանաների հետ, հնարաւորութիւն ստանում նրանց հետ աղօթելու: Հէնց այս աղօթքի ժամանակ էլ նրան երեւում է մէկ այլ հրաշալի տեսիլ, որում արդէն կային գործող անձինք եւ որը երիցս կրկնւում է. երկինք գնացող լուսեղէն սանդուղքով բարձրանում են հայոց նահատակ զինուորականները, որոնք ինը պսակ ունէին իրենց հետ:

Այս երկու գործերում ակնյայտ են գուգահեռները: Երկու դէպքում էլ տեսիլի կենտրոնական կերպարները հայ նահատակ զինուորներն են՝ մի տարբերութեամբ. եթէ Վարդանանց պատերազմում զոհուածներն արդէն բարձրանում են երկինք եւ «էր ամենեցուն տեսլիմ նոր եւ չճնաղ եւ ահաւոր եւ սխալելի իրքեւ գտեսիլ հրեշտակաց»¹⁵, եւ իրենք իրենց հերթին եկել են ուրիշների ետեւից, ապա Մարանդի նահատակները նախորդ փուլում են, եւ Աստուածամայրը նրանց համար դեռ բարեխօսելու է իր Որդուն: Տեսանողները երկուսն էլ պարսիկ են, եւ տեսիլը նրանց երեւացել է գիշերը: Հրաշալի եւ ահաւոր երեւումից յետոյ ե՛ւ դէտքը, ե՛ւ մոգպետը մարմնապէս թուլանում են, ինչը հոգեկան մեծ ցնցման հետեւանք է. դրանից յետոյ դառնում են քրիստոնեայ: Ստ. Օրբէլեանի Պատմութեան այս հատուածն ամենայն հաւանականութեամբ ստեղծուել է հէնց Եղիշէի նկարագրած պատմութեան ազդեցութեամբ: Պարսից զօրքից հալածական հայ զօրականները նահատակւում են Վայոց ձորի զանազան մասերում: Յանուն նրանց վկայարան է կառուցւում:

Ուշագրաւ է «Պատմութիւն համառօտ հօրն Գիւտայ եւ Քրիստոսասիրին, եւ շինութիւն վանացն, որ յեզերն Երասխայ» (էջ 57-64) գլուխը, ուր ներկայացուած են երկու սրբերի վարք-վկայաբանութիւնները: Գողթան գաւառի Շարիթա իշխանը, որը ժամանակին աջակցել էր Մեսրոպ Մաշտոցի առաքելութեան կատարմանը¹⁶, ունէր երկու թոռ՝ Վասակ եւ Շապուհ: Ժառանգութեան համար նրանք կռւում են, եւ Վասակը մահացու սրա-

¹⁵ Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, ի յոյս անեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երեւան, 1957, էջ 150:

¹⁶ ԿՈՐԻՒՆ, Վարդ Մեսրոպայ վարդապետի, էջ 235:

հարում է եղբորը, ապա ուխտում է Աստծուն՝ եթէ եղբայրը ողջ մնայ, ինքը կը հրաժարուի աշխարհիկ բոլոր վայելքներից. եղբայրը ողջ է մնում, եւ վասակը՝ անուանափոխուելով Գիւտ, տասը տարի ճգնում է Երասխի ափի մի ձորակում. այս Գիւտի մասին յիշատակել է նաեւ Մովսէս Խորենացին¹⁷: Այս սուրբ մարդու բոլոր ձեռնարկումներն Աստծոյ կողմից նախանշուած են. նա տեղեակ է, որ Պարսից արքայազնը գալու է իր մօտ, վերանուանուելու է Քրիստոսասէր եւ դառնալու է իր աշակերտը, հետեւորդը, եւ միասին են ընդունելու մահը՝ յանուն Աստուծոյ: Քրիստոնեայ է դառնում նաեւ այս արքայազնի հօրեղբոր որդին: Նրանց կեանքի համառօտ նկարագրութիւնը տրուում է գեղարուեստական տարրեր հնարքներով (հրաշք, տեսիլ), խօսքի պատկերաւորման զանազան միջոցներով: Որպէս գործողութիւնների կատարման նախապայման, երբեմն էլ արգարացում՝ հանդէս են գալիս երազները, տեսիլները, հրաշքները: Պարսից թագաւորը երազում իմանում է որդու գտնուելու վայրը, գալիս է նրա մօտ, սակայն որդին ու նրա ճգնաւոր ընկերները հրեշտակի միջոցով արդէն գիտէին նրա գալու մասին եւ լքել էին իրենց ապաստանը: Խիստ գօրաւոր է Գիւտի հաւատը, այնքան, որ նրա ուղարկած նամակը բուժում է կուրացած մօրը: Կամ՝ այս նոյն թագաւորը 150 հազար հեծեալով յարձակում է ճգնաւորների վրայ, ոմանց սպանում, ոմանց փախուստի մատնում, Գիւտին էլ ժայռովէժ է անում: Վերջինս ողջ է մնում Աստծու շնորհիւ, իսկ չարագործների մի մասը կուրանում է, միւսը՝ փախչում, մնացածներն էլ դարձի են գալիս: Հայր Գիւտն արդէն առաջացած տարիքում էր, երբ նրան ու իր սանին դաժանօրէն սպանում են: Սրբի վերջին խօսքերն են՝ «Ջանա՛, փութա՛ որդեակ՝ զկնի իմ» (էջ 63), որով յիշեցնում էր նախապէս ասուած քաջալերական խօսքը, թէ չպէտք է վախենալ մահից, այլ պիտի ջանալ հասնել երկնային արքայութեան: Ըստ էութեան, ազդեցիկ այն ճառը, որ, սովորաբար, մարտիրոսներն ասում էին մահից անմիջապէս առաջ՝ իրենց խոշտանգողներին կամ նրանց ներկայութեամբ, այս պարագայում այլ կերպ է հանդէս եկել: Երբ լրանում է Գիւտի 84 տարին, Քրիստոսասէրը շարագուշակ մի երազ է տեսնում: Իմաստուն ձերուհին հասկանում է, որ դա իր վախճանի մասին է եւ «քաղում քաջալերութեամբ պնդէր եւ յորդորէր գրիս-

¹⁷ ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Արեղեանի եւ Ս. Յարութիւնեանի (նամանահանութիւն, լրացումներ Ա. Սարգսեանի), Երեւան, 1991, էջ 340:

տոսաաէր ոչ երկնչել, այլ փութալ հասանել ի վերին արքայութիւնն» (էջ 63): Այսինքն՝ այն մտքերը, որ պիտի ասուէին ճառում, արդէն ասուել են, իսկ մահից առաջ միայն յիշեցում է արւում: Մարտիրոսներն ինքնակամ էին ընդունել մահը, եւ, ըստ ամենայնի, պէտք է, որ նրանց գերեզմանները հրաշքներ գործէին, սակայն սրանց թաղման վայրը գաղտնի է պահուել: Օրբէլեանն այս «հրաշալուր պատմութիւնը» լսել է Տաթեւի եկեղեցապան Յովհաննէսից (էջ 64):

Յաջորդ վարքը, որին ուզում ենք անդրադառնալ, Ստեփանոս Սիւնեցունն է: Մատենագիր, աստուածաբան, մեկնիչ, թարգմանիչ, քերական, երաժիշտ¹⁸, բանաստեղծ Ստեփանոս Սիւնեցու (660/670 - 21 է. 735) կեանքը, գործունէութիւնը եւ առհասարակ այն ամէնը, ինչ պատմւում է նրա մասին, Ստ. Օրբէլեանը ներկայացրել է՝ օգտագործելով Մխիթար Այրիվանեցու «Ստորագրութիւն պատմութեան րազմերջանիկ եւ փառաւորեալ հայրապետին Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի» երկը¹⁹, Մովսէս Կաղանկատուացու, Կիրակոս Գանձակեցու Պատմութիւններում առկայ տեղեկութիւնները, այդ ամէնը խմբադրել եւ ամփոփել է իր Պատմութեան յատուկ մի ամբողջական գլխի մէջ (էջ 95-105): Ստեփանոս Սիւնեցու կենսագրութեան մասին խօսելիս հետագայ ուսումնասիրողներն օգտագործել են այստեղ ի մի բերուած տուեալները: Ստեփանոսի զբաղման հարուստ ժառանգութիւնը հիմնականում կրօնական, աստուածաբանական, դաւանաբանական բնոյթի գործեր են, որոնց մի մասը թարգմանութիւններ եւ փոխադրութիւններ են: Ընդհանրապէս Սիւնիքի դպրոցը հայկական դպրատների շարքում ունէր իր առաջնակարգ դիրքը՝ որպէս քերթողական, աստուածաբանական, մեկնողական, փիլիսոփայական, երաժշտական եւ այլ գիտութիւնների կենտրոն, ինչպէս նաեւ «որպէս դաստիարակ՝ հայ եկեղեցիի դաւանութեան

¹⁸ Ն. Թահմիզեանը համարում է, որ նոյն ժամանակահատուածում գործել են երկու Ստեփանոս Սիւնեցիներ (տե՛ս ԹԱՀՄԻԶԵԱՆ Ն., Սիւնեցի համանուն երկու երաժիշտներ եւ Յարութեան աւագ օրինութիւնը. - «Էջմիածին», 1973, Բ., էջ 39-43), սակայն սրան համաձայն չէ Ա. Արեւշատեանը (տե՛ս ԱՐԵՆԻՇԱՏԵԱՆ Ա., Եւս մէկ անգամ Ստեփանոս Սիւնեցու անձի շուրջ. - «Պատմա-բանասիրական հանդէս», 2003/3, էջ 153-160):

¹⁹ ՅՈՎՍԷՓԵԱՆՑ Գ., Մխիթար Այրիվանեցի. Նորագիւտ արձանագրութիւն եւ երկեր, Երուսաղէմ, 1931, էջ 17-23, Նոյնը տե՛ս նաեւ «Սիւն», 1930/ԺԲ., էջ 395-7, 1931/Ա., էջ 18-21, Բ., էջ 50-52, Գ., էջ 118-120, Ե., էջ 148-150, Զ., էջ 184-185, Է., էջ 214-216, Ը., էջ 237-238, Թ., էջ 277-279.

և արժեքներուն անադարտ պահպանման նախանձախնդիր վարդապետներու», եւ «Ստեփանոս Սիւնեցի մէկն է այդ գիտուն վարդապետներէն»²⁰: *Օրբէլեանը խոր ակնածանքով է խօսում իր հայրենակցի եւ անուանակցի*²¹ *անձի եւ գործունէութեան մասին՝ չուլլ գովեստներ ուղղելով նրան, միաժամանակ նուազեցնելով իր արժանիքները, ինչպէս ընդունուած է եղել միջնադարեան երախտաւորների մօտ. «Ստեփանոս - սիւնն երկնի եւ խարիսիսն հաւատոյ, վէմն անդրդուելի եւ արոյեանն անվախ սուրբ եկեղեցւոյ, մարդն երկնային եւ հրեշտակն երկրային, համապագ մեռեալն եւ միշտ կենդանին, հիացուցիչն հրեղինաց եւ զարմացուցիչն քերովրէից, գորոյ զգովութեանցն հոյս ո՛չ է պարտ իմոյ տեաս ու թերավարժ մտացս աղաւաղել քանիւք» (էջ 96): Օրբէլեանն իր այս ձեռնարկի հէնց սկզբում տեղեկացնում է, որ ցանկանում է բանաստեղծական տողերով ներկայացնել Սիւնեցուն. «Տարփումն քաղձանաց գործարանի սրտիս ձգտեցուցանէ զմիտս իմ գիտմերականն առնուլ հագներգութիւն յիմումս առասանութեան՝ ստեղծել տաղս քաջութեան եւ հիւսել դրուատս հրաշալուրս առ ի սիրացուցանել զներքորդումն քաղձալուդս բնաւից յականջս մտադիւր լսողաց, զանհամեմատն յիցս՝ իմաստնոյն եւ սերովքասարաս առն Աստուծոյ, ասեմ զՍտեփաննոսի իմաստասիրի եւ անյաղթ հոռտորի՝ Սիւնեացս մետրապօլի» (էջ 95): *Ինչպէս երեւաց, սա արդէն ներբողական վարքագրութեան օրինակ է: Հեղինակը, որպէս աղբիւր, աչքի առաջ ունեցել է հիմնականում Այրիվանեցու գրած վարքը, թէեւ չի կարելի բացառել, որ եղել է մէկ այլ օրինակ եւս, որից էլ օգտուել են երկու հեղինակներն էլ: Գ. Յովսէփեանցն ապացուցում է, որ Օրբէլեանը, այնուամենայնիւ, Սիւնեցու վկայարանութիւնը կազմել է Այրիվանեցու հետեւողութեամբ*²²: Ս. Սիւնեցին, ինչպէս յայտնի է, եղբրական վախճան է ունեցել (նրան սրատեց Մոզ աւանում բնակուող անբարոյական*

²⁰ ԳՐԻԳՈՐԵԱՆ Մ, Ստեփանոս Սիւնեցի. երկու նորայայտ մեկնութիւններու հրատարակութեան առիթով, *Պէյրուք*, 1958, էջ 68-69.

²¹ Սիւնեաց մետրոպօլիտ, Ստ. արքեպիսկոպոս Օրբէլեանին յաճախ են անուանում Ստեփանոս Սիւնեցի, ինչը երբեմն առիթ է տալիս նրան նոյնացնելու Ը. զարի մետրոպօլիտ եւ արքեպիսկոպոս Ստեփանոս Սիւնեցու հետ: Անցանկալի այս շփոթի մի պատճառն էլ այն է, որ երկուսն էլ զաւանդարանական բնոյթի գործեր ունեն:

²² ՅՈՎՍԵՓԵԱՆՅ Գ., Միլիթար Այրիվանեցի. նորագիտ արձանագրութիւն եւ երկեր, էջ 10-12:

մի կին, որին եպիսկոպոսը դարձի գալու համար երիցս զգուշացրել, ապա պատժի վճիռ էր կայացրել (էջ 101), այս պատճառով էլ Գ. Յովսէփեանցն Ստ. Սիւնեցու կենսագրութեան համար օգտագործել է վկայարանութիւն եզրը:

Ստեփանոս Սիւնեցու վարքը պարունակող գլուխը Օրբէլեանի Պատմութեան ուշագրաւ հատուածներից է: Մատենագիրը, իր խոստման համաձայն, համառօտակի պատմում է Սիւնեցու կրթութեան, հոգեւոր գործունէութեան, գիտական գրադումների՝ թարգմանութիւնների, մեկնութիւնների, ինքնուրոյն աշխատութիւնների, եկեղեցական երգեցողական արուեստում կատարած նորամուծութիւնների մասին:

Օրբէլեանը զուգահեռներ է անցկացնում Աստուծոյ հովանաւորեալ Ստեփանոս Սիւնեցու եւ աստուածաշնչեան երկու դէմքերի՝ Եղիա մարգարէի ու Յովհաննէս Մկրտչի միջեւ: Սրանցից առաջինը քառասուն օր փախստական եղաւ Խարայէլի թագաւոր Աքաարի կնոջից՝ Հեգարէլից, որը ցանկանում էր կռապաշտութիւն հաստատել (Գ. Թագ. ԺԹ.), իսկ երկրորդը բանտում գլխատուեց Հերովդիայի թելադրանքով. Յովհաննէսը վերջինիս յանդիմանել էր ամուսնու եղբոր հետ ամուսնանալու համար (տե՛ս Մատթ. ԺԴ. 3-11, Մարկ. Զ. 17-29, նաեւ Դուկ. Գ. 19): Ըստ Օրբէլեանի՝ Ստեփանոս եպիսկոպոսի ե՛ւ կեանքն էր սրբին վայել, ե՛ւ մահը եղաւ նահատակութիւն: Վարքը զրանով չի աւարտւում: Աստուծոյ սիրելիի մահը չէր կարող անպատիժ մնալ, եւ այդ մասին տեսիլի միջոցով յայտնի է դառնում Նու անունով սրբակենցաղ մի ճգնաւորի: Աստուած քառասնօրեայ երկրաշարժ ու հրաբուխ է ուղարկում երկիր: Երբ դադարում է Աստուծոյ բարկութիւնը, կաթողիկոսը հաւաքում է վանականներին ու սրբի մարմինն ամփոփում Թանահատի վանքում: Ինչպէս յատուկ է բոլոր սրբերին, այս դէպքում եւս նրա գերեզմանի վրայ հրաշքներ են կատարւում. մի օր պատարագի ժամին տապանից աճեղ գոչիւն է լսւում՝ «թողեալ լիցիմ բեզ մեղք քո, ո՛վ կից» (էջ 104), եւ ապաշխարող տիրասպանի մեղքերը ներում են: Ընդ որում, այս կիսն ապաշխարութեան համար հետաքրքիր ձեւ էր բնորոշ. մերկ մարմինը քարերով ծեծելուց յետոյ, մինչեւ կուրծքը թաղուել էր փոսի մէջ ու գիշեր-ցերեկ խոստովանում էր:

Թողութիւնից յետոյ էլ նա տեղից չի շարժուում, եւ այդպէս ապաշխարութեան փոսում էլ մեռնում է²³:

Սիւնեաց պատմիչն իր երկում տեղ է յատկացրել նաեւ Ստեփանոս Սիւնեցու քրոջ՝ Սահակադուխտի համառօտ կենսագրութեանը, որի մասին պատմում է մեծ ոգեւորութեամբ: Եղբօր հետեւութեամբ Սահակադուխտն էլ էր ընտրել Աստծուն ծառայելու ուղին եւ Գառնի ձորի ալրերից մէկում իր օրերն անցկացնում էր աղօթքների ու հոգեւոր մեղեդիների, կցուրդների յօրինմամբ եւ միաժամանակ երաժշտութիւն էր սովորեցնում միւսներին: Եթէ ի նկատի առնենք, որ նրա մահից յետոյ գերեզմանից «բազում քշկուիւն լինէին» (էջ 101), ապա այս պատմութիւնը եւս կարելի է դասել վարքագրութեան տեսակին:

Այսպիսով, Ստեփանոս Օրբէլեանի «Պատմութիւն տանն Սիւսկան» երկում առկայ վարքերն ու վկայաբանութիւնները հիմնականում համապատասխանում են սրբախօսական գրատեսակի կանոններին, թէեւ նրանց մէջ կան նաեւ ժողովրդական գրոյցների միտող դրսեւորումներ՝ ընդունելով զօրութիւն: Հրաշապատումներ, կանխադուշակ երազներ, տեսիլներ, գրոյցներ, որ ընդհանրապէս միջնադարեան գրական մշակոյթի համար սովորական է: Սացուցադրում է նախ այս տեսակի կենսունակութիւնը, ապա նաեւ այն, որ Օրբէլեանն իր ճարտար գրչով զարգացրել է այն: Այսինքն՝ ինչպէս իր ամբողջ Պատմութիւնն է հիսուել միջնադարեան ճշմարտապատում պատմաբանի աշխատանքանակով, նոյնպէս եւ սրբախօսական տեղիները շարադրել է նախ իրադարձութիւնների աղբիւրներին քաջատեղեակ լինելով, ապա՝ նոյն իրադարձութիւնները գեղարուեստական կամ քերթողական գեղեցիկ ոճով վերարտադրելով:

ՆԱՅԻՐԱ ԹԱՄԱՄԵԱՆ

23

Ե. Լալայեանը վկայում է, որ մինչեւ անցեալ դարի սկիզբները տեղի բնակիչները ցոյց էին տալիս սրբի եւ նրան սպանողի գերեզմանատեղիները տե՛ս ԼԱԼԱՅԵԱՆ Ե., Ծարուր-Խարալազեանի գաւառ. - «Ազգագրական հանգէս», XII գիրք, 1905, էջ 249:

**The Hagiographic Passages of Stepanos Orbelian's
"History of the House of Sisakan"**

NAIRA TAMAMYAN

(summary)

Some parts of the 13th c. historian Stepanos Orbelian's "History of the House of Sisakan" concerning the martyrdom of prince Azd, martyrologies of Giut, Qristosaser, Stepanos Siunetsi (8th c.) and Armenian soldiers deceased in different parts of Vayots Dzor province after the Vardanants war (5th c.) were analyzed both as literary criticism and as source study. The sources influenced the creation of these narrations were ascertained. The lives and historical martyrologies in Orbelian's History are composed in correspondence with all the rules of hagiography. They also have some appearances of folklore with peculiar characteristics: miracle histories, prophetic dreams, visions, legends, that is common for medieval literature. Orbelian has skillfully developed this sort of literature. As a truthful historian he has composed the historical martyrologies firstly being well informed from reliable sources then setting out the stories in accordance with the requirements of medieval literary tradition.